ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 07.05.2020թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ԳԲՔԱ-LO-2020/49

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտե
Բողոք բերող՝ «Այթի 365» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցում, նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերում:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ քննության առնելով «Այթի 365» ՍՊԸ-ի (այսուհետ՝ նաև Ընկերություն) կողմից 07.04.2020թ.-ի ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>**

Դիմելով ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 06.04.2020թ. նիստի արձանագրան 5-րդ կետի 1-ին ենթակետով կայացրած որոշումը՝ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

Բողոքներ քննող անձին բողոքը մակագրվել է 07.04.2020թ.-ի և նույն օրը կայացված որոշմամբ բողոքը ընդունվել է վարույթ, տրվել է թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/49 համարի ծածկագիրը և 08.04.2020թ.-ին հրապարակվել է www.gnumner.am կայքում:

Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 07.05.2020թ.-ին:

2. «Այթի 365» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Այթի 365» ՍՊԸ-ն 07.04.2020թ.-ին ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Սույն Ընթացակարգին մասնակցելու նպատակով «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Բողոքաբեր), մասնակցության հայտ է ներկայացրել 05.04.2020թ., և հայտի փաթեթը ներբեռնել է ARMEPS համակարգ նույն օրը՝ 05.04.2020թ.. ժամը 11:53, այդ թվում նաև ներբեռնելով գնային առաջարկը (ստորագրված գնային առաջարկը կցվում է):

Հայտը ներբեռնելու արդյունքում «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն իր էլեկտրոնային հասցեին ARMEPS համակարգից ստացել է ոչ ավտոմատ ծանուցում առ այն, որ ներկայացված հայտը բեռնվել է համակարգ:

Այնուհետև Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2020թ. հայտերի բացման նիստի (կցվում է) արձանագրան 4-րդ կետի համաձայն «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի հայտի փաթեթում բացակայում է գնային առաջարկը:

Նույն արձանագրության 5-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց մերժել «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի հայտը:

www.armeps.am համակարգում տվյալ ընթացակարգով առկա «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի հայտի ուսումնասիրությունը վկայում է, որ գնային առաջարկը ներբեռնված է, սակայն

անհասկանալի պատճառներով այն այնպիսի ֆորմատով է, որը դարձնում է այդ ֆայլը անընթեռնելի:

Մասնավորապես, հայտի փաթեթի «openproject» XML Document (թե էլեկտրոնային, և թե տպագիր տարբերակը կցվում է սույն բողոքին) ուսումասիրությունից պարզ է դառնում, որ հայտի փաթեթում առկա են եղել թե՛ Հավելված 1, և թե՛ Հավելված 2՝ գնային առաջարկը, ավելին, տվյալ փաստաթղթում երևում է նաև գնային առաջարկը՝ 7 400 000 ՀՀ դրամ:

Մասնավորապես, վերոհիշյալ ֆայլի վերջին հատվածը ունի հետևյալ բովանդակությունը.

<criterion type="numeric" pos="1" level="1" id="1585576844258" mandatory="1">

<label> Գնային առաջարկ, առանց ԱԱՀ (Հավելված 2)</label><relevant-doc>

\Financial_Documents\C_1585576844258\</relevant-doc>

<prices><price year="0">7400000.0</price></prices></criterion></envelope></c4t>

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Տվյալ պարագայում ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն, ենթադրաբար, ARMEPS համակարգի ոչ լիարժեք, թերի աշխատելու պատճառով զրկվել է իր մասնակցության իրավունքից լիարժեք օգտվելու հնարավորությունից: Փաստացիորեն հայտը ներբեռնելու արդյունքում Բողոքաբերը ներբեռնել է գնային առաջարկը, ինչը ապացուցվում է նաև «openproject» XML Document ուսումնասիրությունը, սակայն հայտերը բացվելուց հետո պարզվել է, որ հայտում առանձին ֆայլով գնային առաջարկը առկա չէ, ինչը, Բողոքաբերի կարծիքով, հանդիսանում է ARMEPS համակարգի թերի աշխատելու արդյունք, քանի որ փաթեթում այնուամենայնիվ թեկուզ և ոչ ընթեռնելի տարբերակով առկա է գնային առաջարկը:

Գտնում ենք, նման պայմաններում Պատվիրատուն կարող է կնքել պայմանագիր ավելի բարձր գին առաջարկած մասնակից հետ, ինչը էական վնաս կպատճառի բյուջեին և կհանդիսանա բյուջեի միջոցների անհիմն վատնում:

Նման փաստական հանգամանքների պայմաններում, գտնում ենք, որ վիճարկվող գնանշման հարցման շրջանակներում տեղի է ունեցել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետով սահմանված պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքների խախտում, ինչ էլ իր հերթին հանգեցրել է Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված մասնակցի մասնակցության իրավունքի իրականացման սահմանափակմանը կամ ոչ լիարժեք իրականացմանը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ.

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման…:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերություն ներկայացրած բողոքով խնդրել է՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել հանձնաժողովի 06.04.2020թ. նիստի արձանագրան 5-րդ կետի 1-ին ենթակետով կայացրած որոշումը՝ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ:

27.04.2020թ.-ին ներկայացված բողոքի փոփոխությամբ, «Այթի 365» ՍՊԸ-ն հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/49 բողոքը:

Ներկայացված բողոքով հայտնել էինք, որ ըստ Ընկերության՝ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի ներկայացրած հայտի փաթեթում խնդիրը (կցված գնային առաջարկի բացակայությունը) առաջացել է armeps համակարգում առկա նախապատրաստման գործիքի թերության պատճառով:

Վերոհիշյալ հարցի կետ կապված, ի պատասխան Լ.Օհանյանի կատարված հարցման, ՀՀ ֆինանսների նախարարությունը հայտնել է, որ ըստ համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերության՝ նշված խնդիրը առաջացել է ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Ըստ էության, համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերությունը վերոհիշյալ պատասխանը անհիմն է և վերացական, որոնցում առկա են ընդհանրական բնույթի արտահայտություններ, և արված չեն կոնկրետ այս իրավիճակի մանրակրկիտ ուսումնասիրություն: Ավելին, կարծում ենք, որ պատասխանը նախապատրաստվել է նմանատիպ այլ պատասխանների տեքստի հիման վրա, քանի որ տվյալ գրության վերջին պարբերությունում համակարգի տեխնիկական սպասարկում իրականացնող ընկերությունը հայտնել է, որ armeps.am համակարգում աշխատանքի խափանումներ չեն արձանագրվել, մինչդեռ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած բողոքով նման խնդիր ընդհանրապես չի բարձրացվել:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին տեղեկացնում ենք, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ՖՆ նախարարի առաջին տեղակալ Կ.Բրուտյանին ներկայացվել է հարցում՝ կապված առկա տեխնիկակն խնդրի հետ, որտեղ մասնագիտորեն մանրաման նկարագրվել և վերլուծվել է ստեղծված իրավիճակը (նույնաբովանդակ վերլուծություն ներկայացվել է նաև Ձեզ՝ համապատասխան միջնորդությամբ) և խնդրվել է հանձնարարել, որպեսզի համապատասխան ստորաբաժանումը ուսումնասիրի գրությամբ ներկայացված փաստերը և ներկայացնի հիմնավորված դիրքորոշում armeps համակարգում առկա նախապատրաստման գործիքի թերության պատճառով «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներբեռնված, սակայն փաստացի բացակայող գնային առաջարկի փաստի վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից՝ խնդրում ենք ժամկետային առումով հնարավորություն ընձեռնել, որպեսզի մինչև սույն բողոքով որոշում կայացնել այն ժամկետի հաշվարկով, որպեսզի «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն հնարավորություն ունենա ստանալ ՀՀ ՖՆ նախարարի առաջին տեղակալ Կ. Բրուտյանի պատասխանը կատարված հարցմանը:

Միևնույն ժամանակ, սույն գրությամբ ներկայացվում է բողոքի փոփոխություն, որով Բողոքաբերը ներկայացնում է բողոքի նոր իրավական հիմք և նոր պահանջ, որի պայմաններում, գտնում ենք, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման

համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը պետք է հայտարարվի չկայացած՝ այն անհիմն հայտարարվելու հիմքով հետևյալ հիմնավորմամբ.

ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.03.2019թ. հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցում, որի գնման առարկան և տեխնիկական բնութագիրը նույնն է, ինչ սույն բողոքով վիճարկված ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.03.2020թ. հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման գնման առարկան և տեխնիկական բնութագիրը (փաստացիորեն, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով ընթացակարգը վերահայտրարաված«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգն է):

✓ *«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել է առանց ֆինանսական միջոցների առկայության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, և ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի համաձայն՝ ծառայության մատուցումն իրականացվում է այդ նպատակով համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման հիման վրա, համաձայնագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 20 օրվա ընթացքում:*

✓ *www.armeps.am համակարգում առկա գնումների պլանի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ հանդիսանալով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգ՝ գնումների պլանում բացակայում է տվյալ ընթացակարգի նախահաշվային գինը (armeps համակարգից արտատպումը կցվում է):*

✓ *«ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետի համաձայն՝ ընթացակարգի գանձնաժողովը հրավերի պահանջների նկատմամբ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներից որոշում և հայտարարում է ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին: Առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները*

գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա՝

ա. ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները (համապատասխան լիազորություն ունեցող ներկայացուցիչները),

բ. հակառակ դեպքում հանձնաժողովի նիստը կասեցվում է, և մեկ աշխատանքային օրվա ընթացքում հանձնաժողովի քարտուղարը բավարար գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին,

գ. բանակցությունները վարվում են ոչ շուտ, քան ծանուցումն ուղարկվելու օրվան հաջորդող օրվանից երկրորդ և ոչ ուշ, քան հինգերորդ աշխատանքային օրը,

դ. յուրաքանչյուր մասնակցի՝ տվյալ պահին ներկայացրած գնային առաջարկը հրապարակվում է մյուս մասնակիցների համար, և մինչև բանակցությունների համար նախատեսված վերջնաժամկետի ավարտը մասնակիցը կարող է վերանայել իր գնային առաջարկը,

ե. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, ըստ դրան ներկա մասնակիցների ներկայացրած գների, որոնք չեն գերազանցում գնման հայտով սահմանված գինը, որոշվում և հայտարարվում են ընտրված և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցները,

զ. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, ապա գնահատող հանձնաժողովը կարող է բանակցությունների արդյունքում ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակցին հայտարարել ընտրված մասնակից՝ պայմանով, որ՝

- միևնույն գնման առարկայի բնութագրերով տվյալ օրացուցային տարում արդեն իսկ կազմակերպվել է առնվազն մեկ գնման մրցակցային ընթացակարգ, որը չկայացած է

հայտարարվել մասնակիցների ներկայացրած գները գնման հայտով սահմանված գինը գերազանցելու հիմքով պայմանավորված.

- ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքներն ու պարտականությունները ուժի մեջ են մտնում գնման հայտով սահմանված գինը գերազանցող չափով լրացուցիչ ֆինանսական միջոցներ նախատեսվելու և դրա հիման վրա կողմերի միջև համաձայնագիր կնքելու դեպքում: Ընդ որում համաձայնագիրը կնքվում է լրացուցիչ ֆինանսական միջոցները նախատեսվելուն հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ աշխատանքի կատարման ժամկետները երկարաձգելով պայմանագրի կնքման օրվանից մինչև համաձայնագրի կնքման օրը ընկած ժամանակահատվածով: Սույն պարբերության համաձայն կնքված պայմանագիրը լուծվում է, եթե կնքելուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում լրացուցիչ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում.

է. բանակցությունների համար սահմանված վերջնաժամկետը լրանալու պահին, եթե դրան ներկա մասնակիցների ներկայացրած գները գերազանցում են գնման հայտով սահմանված գինը, կամ նվազագույն գները հավասար են, գնման ընթացակարգը Օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիման վրա հայտարարվում է չկայացած, բացառությամբ սույն ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված դեպքի:8.8 Պահանջի դեպքում որևէ մասնակցի հայտիպատճենները հանձնաժողովի քարտուղարն անհապաղ տրամադրում է նման պահանջ ներկայացրած այլ մասնակցին: Պահանջի կատարման անհնարինության դեպքում պահանջ ներկայացրած անձին անհապաղ տրամադրվում է հայտում ներառված փաստաթղթերը, որոնց վերջինս ծանոթանում է տեղում, իրավունք ունի լուսանկարել դրանք և վերադարձնում է հանձնաժողովի քարտուղարին նիստի ընթացքում՝ առանց խոչընդոտելու հանձնաժողովի բնականոն գործունեությանը:

✓ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն:

✓ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 3-րդ կետի համաձայն՝ գնվելիք ծառայության պլանավորված առավելագույն գինը կազմում է 8 մլն ՀՀ դրամը:

✓ Նույն կետի համաձայն՝ հայտեր են ներկայացրել 3 մասնակից, որոնք համապատասխանաբար առաջարկել են հետևյալ գները՝ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն՝ 9 մլն ՀՀ

դրամ, «ԼանԱր Սերվիս» ՍՊԸ-ն՝ 9 985 200 ՀՀ դրամ, «Ջի էմ Զեթ Սերվիս» ՍՊԸ-ն՝ 7 500 000 ՀՀ դրամ:

✓ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին կետի 10-րդ ենթակետը, այն է՝ առաջարկվող գինը, ապրանանքրեի և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, և քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում է գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, նույնիսկ այն դեպքում, երբ հաշվարկվում է մասնակիցների կողմից ներկայացված ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ չկայացած հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը:

✓ Այնուհետև, հաշվի առնելով, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.03.2019թ. հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը 25.03.2020թ. հայտարարվել է չկայացած, ուստի 2020թ. մարտի 30-ին ՀՀ ՊԵԿ-ի կողմից վերջինիս կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով վերահայտարարվում է նոր՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման ընթացակարգը:

Գտնում ենք, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/49 բողոքով վիճարկվող «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման ընթացակարգը հայտարարվել է ոչ իրավաչափ, քանի որ այն վերահայտարարվել է ոչ իրավաչափորեն չկայացած հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում և դրա հետևանքով, ուստի այն անվավեր է հետևյալ հիմնավորմամբ.

✓ Ինչպես արդեն նշել ենք, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել էր առանց ֆինանսական միջոցների առկայության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի: Մինչդեռ հայտերը բացելուց հետո ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետի համաձայն՝ հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի 1-ին

կետի 10-րդ ենթակետը, այն է՝ առաջարկվող գինը, ապրանքրեի և ծառայությունների արժեքից բացի, ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, և քանի որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում է գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, նույնիսկ այն դեպքում, երբ հաշվարկվում է մասնակիցների կողմից ներկայացված ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը, ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը՝ չկայացած հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը:

Գտնում ենք, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը այս եղանակով, այս հիմնավորմամբ և այս հիմքով չեղյալ հայտարարելով «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնման ընթացակարգը՝ խախտել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջները հետևյալ հիմնավորմամբ.

ա) Նախ, ինչպես արդեն նշել ենք, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել էր առանց ֆինանսական միջոցների առկայության՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա և առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի: Ավելին, Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետը նույնպես առանձնացնում է առանձին երկու դեպք՝ երբ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը <u>կամ</u> գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Այլ կերպա ասած, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա առանց ֆինանսական միջոցի առկայության և համապատասխանաբար նախահաշվային գնի չի կարող կիրառվել այն հիմնավորումը, որի համաձայն մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում են գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, քանի որ նախ, օրենսդիրը կիրառում է ոչ թե <<Պլանավորված առավելագույն գին>> հասկացությունը, այլ <<Գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը>> հասկացությունը, ինչը տվյալ դեպքում առկա չի եղել, քանի որ Ընթացակարգը հայտարարվել է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Բացի այդ, հենց Ընթացակարգի հրավերի 8.7-րդ կետը առանձնացնում է առանձին երկու դեպք՝ երբ ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր

մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա: Ուստի այս հիմնավորմամբ իրավաչափ չէ գնահատող հանձնաժողովի որոշումը չեղյալ հայտարարել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը այն հիմնավորմամբ, որ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցում է գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը:

բ) Անգամ եթե տեսականորեն ընդունենք, որ Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա իրականացվելիք գնման դեպքում կարող է առկա լինել իրավիճակ, երբ մասնակիցների կողմից առաջարկված գները գերազանցի գնումն իրականացնելու համար պլանավորված առավելագույն գինը, ապա այս դեպքում էլ գործում է այլ իրավական կարգավորում: Մասնավորապես, Հրավերի 8.7 կետը սահմանում է, որ առաջարկված նվազագույն գների հավասարության դեպքում կամ եթե ոչ գնային պայմաններին բավարարող գնահատված հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցների ներկայացրած գնային առաջարկները գերազանցում են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ծառայությունների գնման հայտով սահմանված գինը կամ գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ վարվում են միաժամանակյա բանակցություններ, եթե նիստին ներկա են բոլոր մասնակիցները կամ հայտեր ներկայացրած բոլոր մասնակիցներին համակարգի միջոցով միաժամանակ ծանուցում է գների նվազեցման շուրջ միաժամանակյա բանակցությունների վարման օրվա, ժամի և վայրի մասին:

Վերոհիշյալ դրույթներից ուղղակիորեն բխում է, որ եթե գնումն իրականացվում է Օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցներին որոշելու նպատակով հանձնաժողովի նիստում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված բոլոր մասնակիցների հետ <u>առանց բացառության</u> պարտադիր անցկացվում են բանակ-ցություններ, և գնահատող հանձնաժողովը չհրավիրելով այդ բանակցություններ՝ անհիմն խախտել է Ընթացակարգի հրավերի իմպերատիվ պահանջները:

Արդյունքում, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չեղյալ է հայտարարվել, որի հետևանքով այդ մրցույթի շրջանակներում խախտվել է «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի պետական գնման մասնակցության իրավունքը:

Ավելին, «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը ոչ իրավաչափ չեղյալ հայտարարելու արդյունքում վերը նշված ընթացակարգը կրկին վերահայտարարվել է, արդեն «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով, որի արդյունքում էլ, «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի մասնակցության իրավունքը նույնպես խախտվել է՝ արդեն հայտի գնային առաջարկի ներբեռբելու հետ կապված խնդրով:

Այսպիսով, գտնում ենք, որ սույն բողոքով վիճարկվող «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը հայտարարվել է ոչ իրավաչափ, քանի որ այն հայտարավել է ոչ իրավաչափ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չեղյալ հայտարարելու հիմքով:»:

Ելնելով վերոգրյալից Ընկերությունը ներկայացրած բողոքի փոփոխությամբ խնդրել է՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը:

Ընկերությունը 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմամբ հայտնել է հետևյալը.

«Ձեր վարույթում է քննվում «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած թիվ ԳԲՔԱ-ԼՕ-2020/49 բողոքը:

Ներկայացված բողոքի շրջանակներում Ձեզ տեղեկացրել ենք, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.03.2019թ. հայտարարվել էր «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ընթացակարգ, որը ոչ իրավաչափ եղանակով չեղյալ հայտարարելու արդյունքում նշված մրցույթը վերահայտարարվել է արդեն «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկարգորվ: Ուստի պահանջ է ներկայացվել պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման

ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը:

Տեղեկացնում ենք Ձեզ, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 18.03.2019թ. հայտարարված և չեղարկված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ընթացակարգը մեր կողմից վիճարկվել է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին և ներկայացվել է պահանջ՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել գնահատող հանձնաժողովի 25.03.2020թ. նիստի թիվ 3 արձանագրության 5-րդ կետով կայացրած ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չկայացած հայտարարելու մասին որոշումը:

06.05.2020թ. կայացրած թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2020/45 որոշմամբ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գ. Ներսիսյանը նշված բողոքը մերժել է այն հիմնավորմամբ, որ ՀՀ ՊԵԿ 2020թ. գնումների պլանը հրապարակված չէ տեղեկագրում, ինչի պայմաններում ընթացակարգը իրավաչափ չէ, քանի որ բացակայում է դրա հայտարարելու իրավական հիմքը: Ուստի և այս տեսանկյունից իրավաչափ չէ բողոքաբերի պահանջը՝ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցումը չկայացած հայտարարելու մասին որոշումը դադարեցնելու վերաբերյալ:

Խնդրում ենք հաշվի առնել, որ տեղեկագրում հրապարակված չէ ՀՀ ՊԵԿ 2020թ. գնումների պլանը, որով նախատեսված լինի նաև Ձեզ ներկայացված բողոքով վիճարկվող ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ գնումների պլանը, ներառյալ՝ փոփոխությունները, հաստատվելուն հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների պլանի:

ՀՀ կառավարության 526-Ն որոշման 16-րդ կետի համաձայն՝ գնման գործընթաց սկսելու համար գնման առարկան պետք է ներառված լինի գնումների պլանում:

Նույն որոշման 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է:

Այսիսով կարելի է եզրակացնել, որ ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը նույնպես ոչ իրավաչափ է հայտարարվել, քանի որ ՀՀ կառավարության 526-Ն որոշման 17-րդ կետի համաձայն՝ գնման գործընթացի կազմակերպման իրավական հիմքը սահմանված պահանջներին համապատասխան հաստատված, իսկ Գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում՝ նաև հրապարակված, գնումների պլանի առկայությունն է: Իսկ ինչպես արդեն հայտնել ենք, տեղեկագրում ՀՀ ՊԵԿ 2020թ. գնումների պլանը հրապարակված չէ, ուստի և բացակայում է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով ընթացակարգի իրավական հիմքը:»:

3. <u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստարկները, հիմնավորումները և դիրքորոշումը</u>.

Բողոքներ քննող անձը 08.04.2020թ.-ին թիվ ԲՔԱ-ԼՕ/2/5263-2020 գրությամբ դիմել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեին՝ հնարավորություն տալով «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ի ներկայացված բողոքի վերաբերյալ ներկայացնել Պատվիրատուի գրավոր կարծիքը:

Պատվիրատուն 09.04.2020թ.-ին թիվ 1/18-2/20131-2020 գրությամբ հայտնել է հետևյալը.

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից կազմակերպված ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրով գնանշման հարցման ընթացակար-գին մասնակցելու համար հայտ է ներկայացրել նաև «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն, սակայան, գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հայտերի բացման ժամանակ պարզվել է, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի գնային առաջարկը գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգում բացակայում է:

Ուստի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը, սույն թվականի ապրիլի 6-ի ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց՝ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Միաժամանակ հայտնում եմ, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում ձեռքբերվող նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունները Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի ռազմավարական ծրագրի իրականացման կարևոր մաս են կազմում, որի ձեռքբերման հետաձգումը կառաջացնի մի շարք խնդիրներ:»:

Կից ներկայացվել են ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրով ընթացակարգի հետ կապված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:

Ընկերության կողմից ներկայացված փոփոխությանն ի պատասխան Պատվիրատուն հայտնել է հետևյալը.

«Ուսումնասիրելով վերոնշյալ բողոքը՝ հայտնում ենք, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014 ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 21-րդ կետի 2-րդ ենթակետի բ) պարբերության համաձայն՝ ֆինանսական միջոցներ չեն նախատեսվել, չնայած տվյալ գնման առարկայի ձեռքբերման համար գնման հայտով պլանավորվել է առավելագույն գին:

Սույն թվականի մարտի 25-ին կայացած գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի ընթացքում պարզ է դարձել, որ մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցել են տվյալ գնումը կատարելու համար գնման հայտով պլանավորված առավելագույն գինը, նույնիսկ այն դեպքում, երբ հաշվարկվում է մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկի ինքնարժեքի և ԱԱՀ-ի հանրագումարը:

Ուստի հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 28-րդ հոդվածի պահանջները և հաշվի առնելով ՀՀ-ում հայտարարված արտակարգ դրությունը՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում առաջարկված գների նվազեցման վերաբերյալ բանակցություններ չեն վարվել, քանի որ այն կդիտարկվեր որպես ավելորդ և չհիմնավորված ժամանակի և ռեսուրսի վատնում:

Այսպիսով, գնահատող հանձնաժողովի սույն թվականի մարտի 25-ի թիվ 2 որոշման համաձայն, ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014 ծածկագրով ընթացակարգը հայտարարվել է չկայացած՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին կետը:

Հարկ եմ համարում նշել, որ սույն գնման առարկայի ձեռքբերման համար կրկին հայտարարվել է մրցույթ՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրերով, որին մասնակցության հայտ է ներկայացրել նաև «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ն, սակայն գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով հայտերի բացման ժամանակ պարզվել է, որ «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի գնային առաջարկը գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգում բացակայում է:

Ուստի, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված գնումների կազմակերպման կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, սույն թվականի ապրիլի 6-ի ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի ներկայացված հայտը մերժվել է:

Ելնելով վերոգրյալից հայտնում ենք Ձեզ, որ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014 և ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրերով ընթացակարգերը կազմակերպվել են «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության համաձայն, և «ԱՅԹԻ 365» ՍՊԸ-ի՝ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015 ծածկագրերով ընթացակարգը չկայացած հայտարարելու պահանջը համարում ենք ոչ իրավաչափ:»:

4. <u>ԳԲՔԱ-LO-2020/49 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.03.2020թ.-ին հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման ընթացակարգ (այսուհետև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի հայտերի ներկայացման և հայտերի բացման նիստի օր է սահմանվել 06.04.2020թ.-ին ժամը 10:00-ին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետև՝ նաև Հանձնաժողով) 06.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ www.armeps.am համակարգի

(այսուհետ՝ Համակարգ) միջոցով հայտ է ներկայացրել նաև «Այթի 365» ՍՊԸ-ն, սակայն Ընկերության կողմից ներկայացված հայտին չի կցվել գնային առաջարկը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը 14.04.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/8495-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով չներկայացված հավելված 2-ը (գնային առաջարկը) համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2020թ.-ին թիվ Ն/26-1/8641-2020 գրությամբ հայտնել է, որ «Այթի 365» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված հայտի փաթեթի «openproject» XML ձևաչափով ֆայլի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերոգրյալ ընթացակարգի կառուցվածքով նախատեսված «Պիտանելություն» բաժնում առկա է pdf ձևաչափով կցագրված ֆայլ, իսկ «Ֆինանսական» բաժնում՝ առկա չէ, ինչի պատճառով էլ այն չի արտացոլվել հրապարակայնացման «Հայտեր» բաժնում:

Ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի

հրապարակման օրվանից՝ 30.03.2020թ. մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 06.04.2020թ. համակարգում իրականացվել է թվով 640 հայտի փաթեթի ներբեռնում՝ թվով 186 ընթացակարգերի համար, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 3 հայտ՝ ընդ որում, հարկ է նշել նաև, որ «Այթի365» ՍՊԸ-ն իրականացրել է հայտի փաթեթի ներբեռնում՝ 05.04.2020թ. ժամը 23:09-ին, հայտի փաթեթի հեռացում՝ 06.04.2020թ. ժամը 09:49-ին և կրկին հայտի փաթեթի ներբեռնում՝ 06.04.2020թ. ժամը 09:50-ին:

https://armeps.am/ppcm/public/bid-report կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Այթի 365» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթում բացակայում է հավելված 2-ը (գնային առաջարկը):

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցությանը, որ «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ի-ին ներկայացված բողոքն անհիմն է, ենթակա է մերժման ամբողջությամբ, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն.

1. Սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Վերոնշյալ հոդվածների վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը, փաստում է, որ գնումների օրենսդրությունը, հիմնվելով գնման գործընթացի մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային, ոչ խտրական, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարության սկզբունքների վրա, նպատակ է հետապնդում ապահովելու գնումների գործընթացում հատուցման դիմաց պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը՝ համարժեք հատուցմամբ, և որ ամենակարևորն է՝ գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման ապահովումը:

Ինչպես նաև, Բողոքներ քննող անձը հարկ է համարում հավելել, որ վերոնշյալ սկզբունքների ապահովումն ու իրականացումը գնումների օրենսդրության շրջանակներում իրացնելու համար, անհրաժեշտ պայման է նաև ցանկացած անձի՝ գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք ունենալու սկզբունքը՝ անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից:

Օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է.

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ... հրավերով նախատեսված՝ մասնակցի կազմած փաստաթղթերն ստորագրում է դրանք ներկայացնող անձը կամ վերջինիս լիազորած անձը (այսուհետ՝ գործակալ): Եթե հայտը ներկայացնում է գործակալը, ապա հայտով ներկայացվում է վերջինիս այդ լիազորությունը վերապահված լինելու մասին փաստաթուղթ:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից հաստատած դիմում-հայտարարությունը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

Հայտերը գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովի կողմից ներկայացված հայտերը մերժվում են, քանի որ առկա չէ օրենքով սահմանված կարգով գնային առաջարկի շտկման հնարավորություն:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը բաղկացած է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքից, սույն օրենքից և իրավական այլ ակտերից: Գնումների մասին իրավական այլ ակտերը հրապարակվում են նաև պաշտոնական տեղեկագրում:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա: Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ

իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով 30.03.2020թ.-ին հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 06.04.2020թ.-ի նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ www.armeps.am համակարգի միջոցով հայտ ներկայացրած «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտին չի կցվել գնային առաջարկը՝ հավելված 2-ը:

Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը, որոշել է «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժել:

Բողոքներ քննող անձը 14.04.2020թ.-ին թիվ Ն/ԲՔԱ-ԼՕ/1/8495-2020 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը և խնդրել է հայտնել, արդյո՞ք հնարավոր է Ընկերության կողմից հայտի փաթեթով չներկայացված հավելված 2-ը (գնային առաջարկը) համակարգում չարտացոլվելու պատճառ հանդիսանալ www.armeps.am համակարգի խափանումներով աշխատելը, թե՞ ոչ: Եթե ոչ, ապա խնդրում եմ հայտնել «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը համակարգում թերի բեռնվելու պատճառների մասին տեղեկատվություն:

Ի պատասխան վերոնշյալ գրության, ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.04.2020թ.-ին թիվ Ն/26-1/8641-2020 գրությամբ հայտնել է, որ «Այթի 365» ՍՊԸ-ի բարձրացրած խնդրի կապակցությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը դիմել է համակարգի տեխնիկական սպասարկումն իրականացնող կազմակերպությանը:

Վերջինս տեղեկացրել է, որ գրության մեջ նշված ծածկագրով ընթացակարգին ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Միաժամանակ հայտնում ենք, որ գրությամբ նշված հայտի փաթեթի «openproject» XML ձևաչափով ֆայլի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ վերոգրյալ ընթացակարգի կառուցվածքով նախատեսված «Պիտանելություն» բաժնում առկա է pdf ձևաչափով կցագրված ֆայլ, իսկ «Ֆինանսական» բաժնում՝ առկա չէ, ինչի պատճառով էլ այն չի արտացոլվել հրապարակայնացման «Հայտեր» բաժնում:

Ինչ վերաբերում է գրությամբ նշված ժամանակահատվածում համակարգի խափանումներով աշխատելուն, ապա հայտնում ենք, որ armeps համակարգը աշխատել է անխափան, որի միջոցով գրությամբ նշված ընթացակարգի հայտարարության և հրավերի հրապարակման օրվանից՝ 30.03.2020թ. մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալու օրը՝ 06.04.2020թ. համակարգում իրականացվել է թվով 640 հայտի փաթեթի

ներբեռնում՝ թվով 186 ընթացակարգերի համար, իսկ գրությամբ նշված ընթացակարգի համար ներբեռնվել է 3 հայտ՝ ընդ որում, հարկ է նշել նաև, որ «Այթի365» ՍՊԸ-ն իրականացրել է հայտի փաթեթի ներբեռնում՝ 05.04.2020թ. ժամը 23:09-ին, հայտի փաթեթի հեռացում՝ 06.04.2020թ. ժամը 09:49-ին և կրկին հայտի փաթեթի ներբեռնում՝ 06.04.2020թ. ժամը 09:50-ին:

https://armeps.am/ppcm/public/bid-report կայքի ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնման ընթացակարգի մասնակիցների շարքում առկա է նաև «Այթի 365» ՍՊԸ-ն, սակայն վերջինիս հայտի փաթեթում բացակայում է հավելված 2-ը (գնային առաջարկը):

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ընթացակարգին «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթը բեռնվել է համակարգ, առկա է համակարգում և տեսանելի armeps.am կայքի «Հայտեր» բաժնում, սակայն այն թերի է, պայմանավորված հայտի փաթեթի պատրաստման՝ ֆայլերի կցագրման, փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները մասնակցի կողմից սահմանված պահանջներին անհամապատասխան կատարված լինելու հանգամանքով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Այթի 365» ՍՊԸ-ի կողմից փաթեթավորման և/կամ ներբեռնման շրջանակում գործողությունները կատարվել են սահմանված պահանջներին անհամապատասխան, որպես հետևանք բացակայել է հրավերով պահանջվող գնային առաջարկը՝ հավելված 2-ը, որի բացակայության պայմաններում ներկայացված հայտն ենթակա է մերժման՝ առանց շտկման հնարավորության ընձեռնման:

Անդրադառնալով Ընկերության կողմից 27.04.2020թ.-ին ներկայացված բողոքի փոփոխությանը (իրավական հիմքերի և պահանջի), Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել հետևյալը.

Օրենքի 50-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ենթակետի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին բողոքը ներկայացվում է գրավոր, ստորագրված, դրանում ներառելով՝ … *վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը*:

Նույն հոդվածի 5-րդ ենթակետի համաձայն՝ … *բողոքի փաստացի և իրավական հիմքերը, ապացույցները:*

Վկայակոչված հոդվածի վերլուծությունից հետևում է, որ Բողոքներ քննող անձը բողոքի քննությունը հարուցում և իրականացնում է միմիայն ներկայացված բողոքի հիման վրա և ենթակա է քննության միայն դրա սահմաններում: Ընդ որում, բողոք ներկայացնելով՝ շահագրգիռ անձն ինքնուրույն է որոշում իր բողոքի պահանջի շրջանակը, ինչը տնօրինչականության սկզբունքի դրսևորման արդյունք է, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական (ընթացակարգային) իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում արձանագրել, որ բողոքի՝ *«վեճի առարկան և բողոքը ներկայացրած անձի պահանջը»* ներկայացնելու պարտականությունը դրված լինելով բողոքաբերի վրա, վերջինս է հանդիսանում շահագրգիռ այն անձը, ով, ինքնուրույն որոշելով իր բողոքի պահանջը (վեճի առարկան), կկանխորոշի բողոքի քննության շրջանակն ու սահմանները: Ընդ որում, օրենսդիրը չի սահմանափակել բողոքի պահանջը (վեճի առարկան) փոփոխելու հնարավորությունը՝ գործի քննության ընթացքում, ուստի բողոքաբերը կարող է ու զրկված չէ լրացնելու /փոփոխելու/ նվազեցնելու բողոքի պահանջը նաև գործի քննության ընթացքում:

Սույն գործով Ընկերությունը, օգտվելով իրեն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի դրույթերով վերապահված բողոքարկման իրավունքից, իրացրել է այն՝ ներկայացնելով բողոքի պահանջի և իրավական հիմքի փոփոխություն: Ընկերությունը 27.04.2020թ.-ին ներկայացրած բողոքի փոփոխությամբ անդրադարձ է կատարել Պատվիրատուի կողմից նախկինում հայտարարված և չկայացած հայտարարված թիվ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի՝ չկայացած հայտարարելու ոչ իրավաչափ լինելու հանգամանքներին և խնդրել է՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին չեղյալ հայտարարել ՀՀ ՊԵԿ կարիքների համար նախագծերի կառավարման համակարգի սպասարկման ծառայությունների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցումը:

Վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ 27.04.2020թ.-ին ներկայացված բողոքի փոփոխությամբ թիվ «ՊԵԿ-

ԳՀԾՁԲ-20/014» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի չկայացած հայտարարելու ոչ իրավաչափ լինելու վերաբերյալ ներկայացված և առկա փաստական հանգամանքները հաստատված ու ապացուցված համարելու հանգամանքը չի կարող հանգեցնել բողոքով ներկայացված՝ թիվ «ՊԵԿ-ԳՀԾՁԲ-20/015» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգը չեղյալ հայտարարելուն պարտավորեցնելու պահանջի բավարարմանը:

Անդրադառնալով Ընկերության կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացմանը՝ Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ բողոքարկմանը ներգրավված մասնակիցների երաշխավորված իրավունքները սահմանվում են «Գնումների մասին» ՀՀ օրենքով, Կարգով և ՀՀ ֆինանսների նախարարի 06.12.2018թ.-ի թիվ 600-Ն հրամանով: Այդ նորմատիվ ակտերով է ապահովվում նաև բողոքի վերաբերյալ դիրքորոշում (պատասխան) ներկայացնելու իրավունքը և այդ իրավունքի արդյունավետ իրացման անհրաժեշտ նախադրյալները, որպիսիք չպահպանելու արդյունքում կխախտվի բողոքարկմանը ներգրավված կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքները:

Ամփոփելով վերոգրյալները, Բողոքներ քննող անձը եզրահանգում է, որ բողոքարկմանը ներգրավված մասնակիցները պետք է իրենց վերապահված իրավունքները, օրենքով սահմանված 30-օրյա բողոքի քննության ժամկետում, իրացնեն այնպես, որ որևէ մասնակից մյուսի համեմատ չգտնվի էականորեն նվազ բարենպաստ վիճակում:

Ընդ որում՝ հարկ է փաստել, որ ներկայացված բողոքի հրապարակման օրվա, ժամի և վայրի մասին տեղեկատվությունը (ժամանակացույցը) հրապարակվել է www.gnumner.am պաշտոնական տեղեկագրում 04.05.2020թ.-ին, որպիսի պայմաններում բողոքի քննությունը, ըստ էության համարվել է ավարտված, իսկ օբյեկտիվ, լրիվ և ճիշտ որոշման կայացման համար և դրան ուղղված գործողություններն էլ՝ սպառված:

Ուստի, նման պայմաններում, Ընկերության կողմից 06.05.2020թ.-ին ներկայացված բողոքի լրացումը Բողոքներ քննող անձը քննարկման առարկա չի դարձնում:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Այթի 365» ՍՊԸ-ի կողմից 07.04.2020թ.-ի-ին թիվ ԳԲՔԱ-Լ0-2020/49 ծածկագրով ներկայացրած բողոքը մերժել ամբողջությամբ՝ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ